



■ ԵԱՀՅԻ պատուիրակութիւնը Ստեփանակերտի մէջ

ԵԱՀՅԻ ծիրէն ներս Մինսկի խորհրդածորովի ներկայացուցչական խումբը ժամանեց Ստեփանակերտ, չուէտացի դեսպան Մ. Մոսպերկի ղլխաւորութեամբ: Պատուիրակութեան մաս կը կազմեն ղլխանազէտներ, քաղաքական ղործիչներ եւ ղինուորական փորձաղէտներ:

ԼՂՀ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ Մասիա Մայիլեան մեր թղթակիցին յայտնեց, թէ «այցելութեան նպատակն է ԵԱՀՅԻ նախապահոյ Մարկարէթ Ա.Փ Ռեկասի յետադայ այցելութեան նախապատրաստութիւնը, ինչպէս նաեւ ղարարական հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար ԵԱՀՅԻ նոր ժամանակացոյցի քննարկումը:

Արցախի մայրաքաղաքին մէջ շրջադայելէ Լաք պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ ԼՂՀ ղեկավարութեան հետ:




■ Դիրքերը կ'ամրացուին

Լեռնային Ղարարաղլի Հանրապետութեան բանակի հրամանատարութենէն կը տեղեկանանք, որ ռազմաճակատի արեւելեան հատուածին վրայ կրակ բացուած է հայկական ղիրքերու ղէմ:

Մեր մարտիկները այս անգամ ԼԵԱ անպատասխան ձղած են թշնամիի ոտնձղութիւնը, յարղելով ղինաղաղարի համաճայնութիւնը:

Միաժամանակ, ըստ բանակի հետախուղութեան տուեալներուն, ռազմաճակատի արեւելեան եւ հարաւարեւելեան շրջաններուն մէջ ատրպէյճանական ղորքերու տեղաշարթեր եւ կուտակումներ կը նկատուին: Ասոր պատասխան միջոցառումը այղ շրջանի մեր պաշտպանողական ղիրքերու ամրապնղումն է, ինչ որ կ'իրականացուի բանակի հրամանատարութեան կողմէ:



■ Զինաղուլը կրկին խախտեցաւ Ատրպէյճանի կողմէ

Օղտուելով ղինաղաղարի ընձեռած հնարաւորութենէն, ատրպէյճանական բանակը վրացոցիչ կուտակումներ կատարելով ձեւրայիլի շրջանին մէջ, լայնածաւալ յարձակման անցաւ Հաղրութի շրջանի սահմանամերձ հայկական ղիրքերուն վրայ: Անակնկալի ղալով թշնամիի յարձակումէն, մեր մարտիկները կարողացան կասեցնել յարձակումը, եւ աւելին՝ ղարարաղցի ղինուորները ուժղին հակահարուածով թշնամին մղեցին ղէպի նախկին ղիրքերը: Տեղի ունեցած ծանր կռիւներու ընթացքին երկու կողմերն ալ տուած են կորուստներ:

ԼՂՀ բանակի հրամանատարութիւնը կը տեղեկացնէ, որ Ռուսաստանի միջնորղութեամբ կրակը ղաղրեցուած է: